ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԽՈՆԱՐՀ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Երջանկության կերտվածքը (Փիլիպպեցիս)

Մաս 3

«Միմիայն կռիվ կծագի ամբարտավանությունից.» Առակաց 13:10

Փիլիպպեցիս 2:1-11

Համար 1-2	Երջանկությունը գալիս է Համերաշխությունից
Համար 3-5	Համերաշխությունը գալիս է Խոնարհությունից
Համար 6-11	Հիսուսը անձնավորեց երկուսն էլ

Համերաշխությունն է կերտում երջանկությունը

«Ապա <u>կամբողջացնեք իմ ուրախությունը</u>, որ <u>նույն միտքն</u> ունենաք, <u>նույն սերն</u> ունենալով՝ <u>միաշունչ նո՛ւյնը խորհեք</u>:» Փիլիպպեցիս 2:2

Ինչպե՞ս պակասեցնել բախումը ուրիշների հետ

1. Երբեք թույլ չտալ, որ հպարտությունս ինձ առաջնորդի

«Ոչ մի բան թող չլինի հակառակությամբ և ոչ էլ սնապարծությամբ.» Փիլիպպեցիս 2:3ա

- Հակառակությամբ (Եսասիրական ձգտումներ)

«Ուր որ նախանձ ու կռիվ կա, այնտեղ <u>անկարգություն</u> և <u>ամեն չար բան</u> կա:» Հակոբոս 3:16

«Հայտնի են <u>մարմնի գործերը</u>, որ են՝ ...թշնամություններ, կռիվներ, նախանձ, բարկություն, հակառակություններ, երկպառակություններ, բաժանություններ:» Գաղատացիս 5:19-21

- Սնապարծություն

2. Լինել խոնարհ, թե ոչ կսայթաքեմ

«Այլ խոնարհությամբ մեկը մյուսին թող <u>իր անձից ավելի լավ համարի</u>:» Փիլիպպեցիս 2:3բ

«Աստված ամբարտավաններին հակառակ է, բայց խոնարհներին <u>շնորհ է տալիս</u>:» Հակոբոս 4:6

3. Սովորել ուշադրություն ցույց տալու մոռացված արվեստը

«<u>Միայն ձեր անձի շահերին</u> չնայեք, այլ ամեն մեկն իր <u>ընկերոջն էլ</u>:» Փիլիպպեցիս 2:4

«Եթե մեկն ուզում է իմ հետևից գալ, թող իր <u>անձն ուրանա</u>, <u>ամեն օր</u> իր խաչն առնի ու իմ հետևից գա:» Ղուկաս 9:23

4. Հարցնել թե Հիսուսը ի՞նչ կաներ

«Ձեզանից յուրաքանչյուրը թող այն մտածմունքն ունենա, որ Քրոստոս Հիսուսի մեջ էր.» Փիլիպպեցիս 2:5

Հիսուսի պես վարվել նշանակում է...

- Չպահանջել այն, ինչին իմ կարծիքով արժանի եմ

«Աստծու բնությունն ունենալով՝ Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց: Այլ իր անձն ունայնացրեց...» Փիլիպպեցիս 2:6

- Նայել թե ինչով կարող եմ ծառայել

«<u>Ծառայի կերպարանք առնելով</u>, մարդկանց նման լինելով ու կերպարանքով մարդու պես գտնվելով.» Փիլիպպեցիս 2:7

- Անել այն, ինչ ճիշտ է, նույնիսկ եթե այդ ցավեցնի ինձ

«Հիսուսը կերպարանքով մարդու պես գտնվելով իրեն խոնարհեցրեց ու հնազանդ եղավ մինչև մահ, այն էլ՝ խաչի մահվան:» Փիլիպ. 2:8

Վարձատրություն

«Դրա համար էլ Աստված շատ բարձրացրեց նրան. մի անուն շնորհեց նրան, որ ամեն անունից ավելի բարձր է: Որպեսզի Հիսուսի անունին <u>ծալվի</u> երկնավորների, երկրայինների և երկրի տակ եղողների <u>ամեն ծունկ, և ամեն լեզու դավանի</u>, որ Հիսուս Քրիստոս Տեր է Հոր <u>Աստծու փառքի համար</u>:» Փիլիպպեցիս 2:9-11

Հաջորդ Քարոզի Թեման:

«ԻՆՉՊԵ՞Ս ՊԱՀԵԼ ԵՐՋԱՆԻԿ ՍԻՐՏԸ»

Հովիվ Սարօ Խաչիկեան